ճիւղիցն, և այլ առաջ ԺԸ ևս սիւնս փայտեայ, որ զբաղում տեղիս տարածանէր ճիւղքն, և ի ներքոյ նորա էր տեղիք ձիրանթացի և զահվէխանայք և մզկիթ և տեղիք խաղալեաց, և առաւօտուն ևս չրջեալ յեկեղեցին Յունաց և ի պարտէզս ընդ հովանեաւ նաբընճի և լիմոնի ծառոցն՝ ուրախանայաք. և ի հասարակել աւուրն Դշի (14 Օքտոբ.) մտաք ի նաւ և Դշի (15 Օքտոբ.) առաւօտու հասանէաք ի մեծն Ռոդոս և անդ կացեալ հայեցաք ուղեկցի[1]) և Զշի (17 Օքտոբ.) առաւօտու ելեալ անդէն՝ մտաք ի մեծ ծով, որ չերևէր ցամաք, մինչ ի Շաբաթ երեկոյիս (18 Օքտոբ.) հասաք ի Միս կղզին ի գիւղ նաւապետին, կացեալ անդ Կիր. (19 Օքտոբ.) և Բշի (20 Օքտոբ.) Գ գիշեր: Եւ Դշի (21 Օքտոբ.) առաւօտու ապա ելեալ անտի մտաք ի մեծ ծովն ի գիշեր և ի ցերեկ և Դշի (22 Օքտոբ.) երեւեալ մեզ ֆռանկ մի նաւի զհետ մեր մտեալ գայր ստէպ ստէպ, և նաւավարքն[2]) յահի լեալ ընդ մեր՝ բանային զամենայն առագաստն և մեզմէր յոյժ քամին, և արկին զմեծամեծ թի նաւին ի ծով և քարշէին ընդ ճանապարհորդովք և բաղում լինէր երկիւղ: Այց արարեալ Աստուած՝ հեռացաք ի նոցանէ Դշի երեկոյին երկրորդ ժամու գիշերոյ, որ Օգոստոս ԻԲ, հասաք ի Նաւահանգիստս մեր Յոպպէ, որ Ռամլայ[3]) ասի, գոհանալով զմարդասիրէն Աստուծոյ: Եւ առաւօտուն (23 Օքտոբ.) հանեալ զկարասիս մեր ի նաւէն՝ հանգեաք յեզր ծովուն, անդ կատարելով զտօն մարգարէին Երեմիայի, նոյնպէս և Կիւրակէի (26 Օքտոբ.): Եւ Բշի (27 Օքտոբ.) ելաք յՌամլոյ և Դշի (28 Օքտոբ.) Թ-րդ ժամու հասանէաք ի փափաքելին ամենեցուն և յըղձալին[4]) մեր ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ իբրեւ մերձ էաք, գային առաջի մեր կրաւնաւորք և աբեղայք, քաղա-

1) ուղղեկցի. 2) նավավարքն. 3) Ցռամլայ. 4) յղձալին.